

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈՎԻՒՒ

1955 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Սիրելի Մխականներ,

Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ Գեր.Տ.Մամբրէ Արքեպիսկոպոս Գալնասեան, իր 19, Դեկտ. 1954 թուակիր պաշտօնագրով, մեզ հովիւ նշանակած էր պատուական Համայնքիդ: Պատուարժան Մխական Խորհուրդի բարեհաճ կարգադրութեամբ, 29, Դեկտ. 1954 ին, նիւ-Շորքէն Բէթըրսըն փոխադրուելով տեղաւորուեցանք եկեղեցւոյ հովու-տան մէջ: Պաշտօնի սկսանք Յունուար 1, 1955 ին: Այս թեմի Կանոնադրութեան 45րդ. յօդուածի տրամադրութեան համաձայն, շանացինք մեր պարտականութեանց ընթացք տալ հետեւեալ կերպով:

1. Եկեղեցական պաշտամունք:

Աշխատեցանք որ կիրակիներն ու տօնական օրերը անխափան եկեղեցա-կան պաշտամունք ունենանք: Գոհունակութեամբ կրնամ ըսել թէ 1955 ի ընթացքին ամէն կիրակի եւ տօնական օրեր Ս. պատարագ կամ առաւօտեան ժամերգութիւն ունեցած ենք եկեղեցւոյս մէջ: Միայն արձակուրդի շրջանիս պաշտամունք չենք ունեցած:

Եկեղեցականներու պակասին պատճառաւ մի քանի անգամներ ալ պատա-գելու եւ ծիսակատարութիւն կատարելու համար ուրիշ համայնքներու այցելած ենք Առաջնորդարանի հրահանգով եւ Պատուարժան Մխական Խորհուրդի հաւանութեամբ:

2. Այցելութիւնք

Մեր պայմաններուն ներած չափով հովուական այցելութիւն տուած ենք մեր ծխականներուն: Այցելած ենք նաեւ հիւանդներուն երբ լուր ունեցած ենք: Մեր այցելութիւններու ընթացքին Հոգաբարձութեան անդամներէն շատեր ինծի ընկե-րակցած են: Շատ կը փափաքիմ որ երբ հիւանդ մը ունենանք, անմիջապէս ինծի լուր տրուի հիւանդի պարագաներուն կողմէ, որպէսզի երենց այցելեմ: Պատահած է որ օրե-րով անկողին պառկող հիւանդներուն չենք կրցած այցելել, պարզ անոր համար որ լուր չենք ունեցած:

3. Տնօրնէք:

Ս. Մնունդին եւ Զատկին տնօրնէք կատարած ենք հրաւերով եւ եր-բեմն ալ անձնական այցելութիւններով: Մեր այցելութիւններու ատեն Հոգաբարձու-թեան անդամներէն շատեր եւ Տիար Սեդրակ Անէմեան Խիրայօթար մեզի առաջնորդած են մեր ծխականներուն տունները:

4. Միսակատարութիւն:

Վերջացող տարւոյն մէջ ունեցած ենք հետեւեալ ժիսակատարութիւնները:  
Մկրտութիւն 16, Գսակ 2, Թաղում 5, եւ նշանտուք 3:

5. Հոգաբարձութիւն:

Պատուարժան Հոգաբարձութեան հետ պնեցած ենք 13 ժողովներ եւ զբաղուած են յայնպիսի հարցերով, որոնք ուղղակի կապ ունէին եկեղեցւոյս պայծառութեան եւ Գաղութիս բարգաւաճման հետ: Հաճոյքով կը յայտնենք թէ Հոգաբարձութեան անդամները իրեն պարտականութիւնները կատարած են նուիրումով եւ մեծ զոհողութեամբ: Ուրախ եմսոյն պէս ըսելու թէ մեր եւ Հոգաբարձութեան յարաբերութիւնները եղած են համերաշխ եւ սիրալիր:

6. Տիկնանց Միութիւն:

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը իր գործունէութեամբ շատ օգտակար եղած է եկեղեցւոյս պայծառութեան եւ մեր համայնքային ընդհանուր կեանքին: Անոր մէջ մի անդամին հանդէպ ունինք յարգանք եւ հայրական սէր: Նախորդ Վարչութիւնը շատ փայլուն եւ արդիւնաւոր շրջանէ մը բոլորելէ ետք զարեցաւ պաշտօնէ: Հեռացող Վարչութեան իւրաքանչիւր անդամին կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնն ու հայրական օրհնութիւնները: Երկու տարուան պաշտօնավարութեան համար ընտրած ենք նոր Վարչութիւն մը, որուն անդամներն են հետեւեալները:—Տիկնայք Եսթէր Աւետիսեան, Ատենապետ, Մաքրուհի Տիշեան, փոխ Ատենապետ, Անահիտ Մարութեան, Ատենաղպիր, Արփի Վարդանէսեան, Գանձապահ, Մարկրիթ Սիմոնեան, Բարտուղար Թղթակցութեանց, Վիքթորիա Նուրիկեան, Ենթակառուցող ~~Կարոյն~~ Երեցկին Մարի Տ. Ասատուրեան, խորհրդական: Սրտագինս կը շնորհակարենք նոր Վարչութիւնը եւ կը մաղթենք համբերութիւն եւ յաջողութիւն:

7. Զանազան Մարմիններ եւ Կազմակերպութիւններ:

Գաղութիս մէջ գոյութիւն ունին նաեւ հետեւեալ մարմիններն ու կազմակերպութիւնները: Դպրաց Դաս, Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Ընկերակցութիւն, Կիրականօրեայ Վարժարան, եւ Ամուսնացեալ Չոյգերու Միութիւն: Վերոյիշեալներէն իւրաքանչիւրը կը կատարէ շատ օգտակար ծառայութիւն: Մենք գնահատելով իրենց ազգօգուտ գործունէութիւնը, բոլորին ալ կը յայտնենք շնորհակալութիւն եւ յաջողութիւն:

Լրատու եւ Հայկական Դպրոց:

Լրատուն պիտի շարունակենք հրատարակել կանոնուոր կերպով ապագային եւս: Հայկական Դպրոցը սկսած ենք Սեպտեմբերին եւ, որչափ շարունակուի: Այս ունինք ձառակերտ: Ընթացիկ տարւոյն մէջ պիտի շնանանք անդամներուն թիւը աւելցնել եւ հաս-

տատել Լսարան մը եւ հ/տապնդել սրահի շինութիւնը:

Մեր մէկ տարուան պաշտօնավարութեան ընթացքին գուցէ կարելոր  
զործունէութիւն մը չենք ունեցած, բայց կը յուսամ թէ ապագային պիտի կրնանք  
աւելի օգտակար ըլլալ մեր սիրելի ծուխին:

Կ, ազօթեմ որ Աստուած տայ մեզ իմաստութիւն եւ բարի առաջնորդութիւն  
որ կարենանք ծառայել իր փառքին երիշինութիւն ազգիս Հայոց եւ Եկեղեցւոյս  
Հայաստանեայց, ամէն: